# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/1/1
**N** 11/348-2019

ք. Երևան «25» 12 2019թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Հայրենի Տուն ՍՊԸ-ն /Գործընկեր 1/ ի դեմս տնօրեն Ս. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա ու ԱՐՍԳՈՇԻՆ ՍՊԸ-ն / Գործընկեր 2/, ի դեմս տնօրեն Գ. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված <u>Աշխատանքային տարածքների կառուցման աշխատանքները</u> (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից**՝ 335 **օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

### 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթերին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:

Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **<u>55 693 200 (հիսունհինգ միլիոն վեց հարյուր իննսուներեք հազար երկու հարյուր)</u>** ՀՀ դրամ, որից **<u>9 282 200 (ինը միլիոն երկու հարյուր ութսուներկու հազար երկու հարյուր)</u>** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

8.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ԱԱԾ**
**ք.Երևան, Նալբանդյան104**

**ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/հ 900011301067**
**ՀՎՀՀ 01507079**
**Տնօրենի տեղակալ**
**Ա. Հակոբյան**

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**Գործընկեր 1**
Հայրենի Տուն ՍՊԸ
**Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Խանջյան փ., 2-րդ նրբ. 4-րդ շենք**
**ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ**

**Հ/հ 163158036232**
**ՀՎՀՀ 03024201**
**Տնօրեն**
**Ս. Վարդանյան**

**Գործընկեր 2**
ԱՐՍԳՈՇԻՆ ՍՊԸ
**Կոտայքի մարզ, գ. Ալափարս 19փ., տ.36**
**ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ**

**Հ/հ 220433330143000**
**ՀՎՀՀ 02809833**
**Տնօրեն**
**Գ. Հակոբյան**

Հավելված թիվ 1
« 25 » 12 2019թ. կնքված
N111348-2019 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
## ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
## <<ՀՀ ԱԱԾ ՍԶ 5070 զ/մ 13-րդ ՍՌԻ-ի սպայական բնակարանների կառուցման>>
## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| Հ/Հ | Աշխատանքների անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի արժեքը | Ընդհանուրը |
|---|---|---|---|---|---|
| | | | | դրամ | դրամ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | Համաշինարարական աշխատանքներ | | | | |
| | հիմքեր | | | | |
| 1 | Խրամուղու մշակում III կարգի գրունտերում , կողալիցքով | մ³ | 72,900 | 594 | 43303 |
| 2 | Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում , կողալիցքով | մ³ | 137,700 | 768 | 105754 |
| 3 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում h=100մմ | մ³ | 10 | 6381 | 63810 |
| 4 | Նախապատրաստական շերտ B 7,5 դասի բետոնով h=100մմ | մ³ | 10 | 41187 | 411870 |
| 5 | Միաձույլ ե/բ հիմք B20 դասի բետոնով | մ³ | 35.8 | 47510 | 1700858 |
| 6 | Ամրան AI c դասի | տն | 1.13 | 509911 | 576199 |
| 7 | Ամրան A500c դասի | տն | 1.36 | 509911 | 691479 |
| 8 | Հիմքերի իրականացում B7,5 դասի խամքարաբետոնով | մ³ | 45.8 | 33501 | 1534346 |
| 9 | Հիմքերի արտաքին մակերեսների հիդրոմեկուսացում բիտումով | մ² | 66.2 | 2748 | 181918 |
| 10 | Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից' տոփանումով | մ³ | 103.3 | 303 | 31300 |
| 11 | Ավելորդ գրունտի փռում տեղում | մ³ | 107.3 | 82 | 8799 |
| | Ընդամենը | | | | **5351636** |
| | Սյուներ | | | | |
| 1 | Միաձույլ ե/բ սյուն B20 զասի բետոնով | մ³ | 5.01 | 71485 | 358140 |
| 2 | Ամրան AI c դասի | տն | 0.176 | 509911 | 89744 |
| 3 | Ամրան A500c դասի | տն | 0.474 | 495695 | 234959 |
| | Ընդամենը | | | | 682343 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Պատեր | | | | |
| 1 | Պատերի իրականացում կանոնավոր ձեի տուֆ քարով կարանների գծանշմամբ (расшивка швов, 40սմ հաստությամբ) | մ³ | 141 | 23138 | 3262458 |
| 2 | Ամրան A1 c դասի | տն | 0,08 | 509911 | 40793 |
| 3 | Միաձույլ ե/բ քարավոր B15 դասի բետոնով | մ³ | 1,1 | 79893 | 87882 |
| 4 | Ամրան AI c դասի | տն | 0,032 | 599911 | 16315 |
| 5 | Ամրան A500c դասի | տն | 0,118 | 495695 | 58492 |
| 6 | Գետնախարիսխի սվաղ ց/ավազե շաղախով | մ² | 41,4 | 2061 | 85324 |
| | Ընդամենը | | | | **3551267** |
| | Հավաքովի ե/բ ծածկ | | | | |
| 1 | Ծածկի իրականացում ԾՍ 5.8x1.2 գործարան | հատ | 30 | 92888 | 2786640 |
| 2 | Միաձույլ ե/բ պարապետ B15 դասի բետոնով | մ³ | 11 | 63334 | 696674 |
| 3 | Ամրան AI c դասի | տն | 0,15 | 509911 | 76487 |
| 4 | Ամրան A50 c դասի | տն | 0,77 | 495695 | 381685 |
| 5 | Միաձույլ ե/բ միջծածկային կարաններ B20, դասի բետոնով | մ³ | 14,8 | 82373 | 1219120 |
| 6 | Ամրան AI c դասի | տն | 0,29 | 509911 | 147874 |
| 7 | Ամրան A500c դասի | տն | 1,62 | 495695 | 803026 |
| 8 | Ցեմենտավազե հարթեցնող շերտ h=50մմ հաստությամբ | մ² | 315 | 2119 | 667485 |
| 9 | Լվացված խարամ h= 1 OOմմ հաստությամբ | մ³ | 3 1,5 | 7685 | 242078 |
| | Ընդամենը | | | | **7021069** |
| | Նախամուտքի աստիճաններ | | | | |
| 1 | Նախամուտքի աստիճանների իրականացում B 7,5 դասի խամքարաբետոնով | մ³ | 8 | 47020 | 376160 |
| 2 | Միաձույլ ե/բ B 12,5 դասի բետոնով | մ³ | 2,8 | 47626 | 133353 |
| 3 | Ամրան AI c դասի | տն | 0,06 | 509911 | 30595 |
| 4 | Գետնախարիսխի սվաղ ց/ավազե շաղախով | մ² | 9 | 2061 | 18549 |
| 5 | Աստիճանների, հարթակների և նախամուտքի երեսապատում 30 մմ հաստությամբ բազալտե սալիկներով | մ² | 26,8 | 21309 | 571081 |
| 6 | Մետաղական բազրիքների պատրաստում և տեղադրում ուղղանկյուն կտրվածքի խողովակ (60x60x4մմ) | տն | 0,38 | 726465 | 276057 |
| 7 | Ներդիր դետալներ | տն | 0,035 | 828448 | 28996 |
| 8 | Մետաղական բազրիքի երկշերտ յուղաներկում | մ² | 17 | 870 | 14790 |
| | Ընդամենը | | | | **1449581** |
| | Սալվածք | | | | |
| 1 | Խճի նախապատրաստական շերտի իրականացում h= 100 մմ հաստությամբ | մ³ | 10 | 6381 | 63810 |
| 2 | Սալվածքի իրականացում B 7,5 դասի բետոնով h=100 մմ | մ³ | 5 | 41187 | 205935 |
| 3 | Բետոնե եզրաքարեր B 7,5 դասի բետոնով | մ³ | 1,9 | 54718 | 103964 |
| | Ընդամենը | | | | **373709** |
| | Հատակ | | | | |
| 1 | Հատակի գրունտի կրկնակի տոփանում | մ² | 275 | 116 | 31900 |
| 2 | Հատակի խճի նախապատրաստական շերտի իրականացում h-100մմ հաստությամբ տոփանումով | մ³ | 27,5 | 6381 | 175478 |
| 3 | Ե/բ հատակի իրականացում B 7.5 դասի բետոնից h=100 մմ | մ³ | 22 | 32302 | 710644 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | Ամրան AI c դասի | տն | 0,61 | 509911 | 311046 |
| | Ընդամենը | | | | **1229068** |
| | Տանիք | | | | |
| 1 | Տանիքածածկույթի պատրաստում ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից 0.55 մմ հաստությամբ ներառյալ փայտե կավարամածը | $մ^2$ | 390 | 6614 | 2579460 |
| 2 | Գագաթնաթիթեղի պատրաստում ցինկապատ հարթ թիթեղից 0.55մմ հաստությամբ | $մ^2$ | 19,5 | 4402 | 85839 |
| 3 | Ձեղնահարկի լուսամուտների ծածկում ցինկապատ հարթ.055մմ հաստությամբ | $մ^2$ | 19,2 | 4402 | 85839 |
| 4 | Ջրհորդանի և քիվի պատրաստում ցինկապատ հարթ թիթեղից 0.55մմ հաստությամբ | գմ | 82,8 | 5310 | 439668 |
| 5 | Ջրատար խողովակների պատրաստում ցինկապատ հարթ թիթեղից 0.55մմ հաստությամբ, D=150մմ, H=3.0մ 8 կոմպ. | մ | 24 | 2643 | 63432 |
| 6 | Ձեղնահարկի լուսամուտների պատրաստում շերտափեղկերով | հատ | 3 | 47067 | 141201 |
| 7 | Փայտե կոնստրուկցիաների տեղադրում | $մ^3$ | 15.1 | 204838 | 3093054 |
| 8 | Փայտե կրող կոնստրուկցիաների,տախտակամածի և կավարամածի հակահրդեհային և հականեխիչ պաշտպանություն | $մ^3$ | 16,8 | 12739 | 214015 |
| 9 | Տանիքի մետաղական սանդուղքի պատրաստում և տեղադրում | տն | 0,04 | 726465 | 29059 |
| ю | Տանիքի մետաղական սանդուղքի երկշերտ յուղաներկում | $մ^2$ | 2 | 873 | 1746 |
| 11 | Շին.աղբի բարձում և տեղափոխում 10կմ | տն | 15 | 4320 | 64800 |
| | Ընդամենը | | | | **6798113** |
| | Ներքին հարդարման աշխատանքներ | * | | | |
| | Միջնորմեր | | | | |
| 1 | Միջնորմների իրականացում կանոնավոր բլոկից (20սմ հաստությամբ) | $մ^3$ | 32 | 21018 | 672576 |
| 2 | Ամրան A I c դասի | տն | 0,133 | 509911 | 67818 |
| 3 | Կապակցող դետալներ | տն | 0,23 | 509911 | 117280 |
| | Ընդամենը | | | | **857674** |
| | Հատակներ | | | | |
| 1 | Հատակի ցեմենտավազե հարթեցնող շերտ h=30մմ | $մ^2$ | 275 | 1397 | 384175 |
| 2 | Լամինատե հատակի տեղադրում սպունգի և շրիշակի հետ միասին h=12մմ | $մ^2$ | 141 | 5846 | 824285 |
| 3 | Հատակների երեսպատում խեցեսալիկներով, ցեմենտե հիմքով սոսնձանյութով շրիշակների հետ միասին | $մ^2$ | 21 | 6241 | 131061 |
| 4 | Հատակների երեսպատում կերամոգրանիտե սալիկներով, ցեմենտե հիմքով սոսնձանյութով | $մ^2$ | 92.7 | 10655 | 987359 |
| 5 | Շրիշակներ կերամոգրանիտե սալիկներից H = 10սմ, ցեմենտե հիմքով սոսնձանյութով | $մ^2$ | 11 | 14602 | 160622 |
| | Ընդամենը | | | | **2487502** |
| | Առաստաղներ | | | | |
| 1 | Առաստաղի գաջե սվաղի իրականացում | $մ^2$ | 275 | 2818 | 774950 |
| 2 | Առաստաղի լատեքսային ներկում մածիկապատումով | $մ^2$ | 275 | 1677 | 461175 |
| | Ընդամենը | | | | **1236125** |
| | Պատեր | | | | |
| 1 | Պատերի գաջե սվաղի իրականացում | $մ^2$ | 732 | 2341 | 1713612 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Պատերի լատեքսային ներկում մածիկապատումով | մ$^2$ | 732 | 1549 | 1133868 |
| 3 | Պատերի ց/ավազային սվաղ | մ$^2$ | 112,7 | 2818 | 317589 |
| 4 | Խոհանոցի մեկ պատի հախճասալերի իրականացում '0.5մ բարձրությամբ | մ$^2$ | 11 | 6300 | 69300 |
| 5 | Սան. հանգույցի պատերի հախճասալերի իրականացում | մ$^2$ | 101,7 | 6300 | 640710 |
| | Ընդամենը | | | | **3875079** |
| | Դռներ,պատուհաններ և պատուհանագոգեր | | | | |
| 1 | Պատուհանների և դռների ներքին թեք մասերի գաջե սվաղ (շեպերի) | մ$^2$ | 38,3 | 4274 | 163694 |
| 2 | Պատուհանների և դռների ներքին թեք մասերի լատեքսային ներկում մածիկապատումով | մ$^2$ | 38,3 | 1549 | 59327 |
| 3 | Մետաղական արտաքին դռան տեղադրում | մ$^2$ | 7,6 | 43145 | 327902 |
| 4 | Մետաղական արտաքին դռների փական՛բռնակով | կոմպ | 4 | 7045 | 28180 |
| 5 | Փայտե ներքին բացվող դռների տեղադրում 40մմ հաստությամբ | մ$^2$ | 30,3 | 13811 | 418473 |
| 6 | Փայտե ներքին բացվող դռների փական'բռնակով | կոմպ | 16 | 2818 | 45088 |
| 7 | Մետաղապլաստե սպիտակ գույնի արտասահմանյան պրոֆիլներով 60 մմ հաստությամբ ներքին բացվող դռների տեղադրում | մ$^2$ | 5,9 | 35517 | 209550 |
| 8 | Մետաղապլաստե սպիտակ գույնի արտասահմանյան պրոֆիլներով 60 մմ հաստությամբ 4+4 ապակեփաթեթով բացվող պատուհանների տեղադրում ցանցով | մ$^2$ | 14,4 | 32163 | 463147 |
| 9 | Մետաղապլաստե սպիտակ գույնի արտասահմանյան պրոֆիլներով 60 մմ հաստությամբ 4+4 ապակեփաթեթով չբացվող պատուհանների տեղադրում | մ$^2$ | 1 2 | 26201 | 314412 |
| 10 | Պատուհանագոգերի ց/ավազային հարթեցնող շերտ | մ$^2$ | 8 | 2061 | 16488 |
| 11 | Պլաստմասե պատուհանագոգերի տեղադրում 40սմ լայնությամբ | գմ | 19 | 4087 | 77653 |
| 12 | Պատուհանագոգերի արցունքաթափերի տեղադրում 0.6մմ հաստ, ցինկապատ թիթեղից | մ$^2$ | 3 | 10224 | 30672 |
| 13 | Մետաղական արտաքին դռան երկշերտ յուղաներկում | մ$^2$ | 15,2 | 873 | 13270 |
| 14 | Պատուհանների և դռների արտաքին թեք մասերի /շեպերի/ ց/ավազային սվաղ | մ$^2$ | 14 | 2818 | 39452 |
| | Ընդամենը | | | | **2207308** |
| | Ներքին ենթակառուցվածքներ | | | | |
| | Ջրամատակարարում | | | | |
| 1 | D= 25մմ PN-1 ՄՊա տրամագծի. մետաղապլաստե խողովակների մոնտաժում | գծմ | 24 | 804 | 19296 |
| 2 | D= 20մմ PN-1 ՄՊա տրամագծի. մետաղապլաստե խողովակների մոնտաժում | գծմ | 8 | 734 | 5872 |
| 3 | D= 15մմ PN-1 ՄՊա տրամագծի. մետաղապլաստե խողովակների մոնտաժում | գծմ | 78 | 664 | 51792 |
| 4 | D= 50մմ պլաստմասե պատյան խողովակներ | գծմ | 12 | 664 | 7968 |
| 5 | Ցնցուղի ծորակ խառնիչով | հատ | 4 | 10422 | 41688 |
| 6 | Լվացարանի ծորակ խառնիչով | հատ | 4 | 10131 | 40524 |
| 7 | Գնդային փական D= 25 | հատ | 4 | 5170 | 20680 |
| 8 | Գնդային փական D=15 | հատ | 32 | 4611 | 147552 |
| 9 | Մետաղապլաստե խողովակների պարուրակային կցամասեր D =15-25 մմ | հատ | 96 | 1374 | 131904 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10 | Կերամիկական լվացարան | կոմպ | 4 | 18154 | 72616 |
| 11 | Ցնցուղ | հատ | 4 | 10422 | 41688 |
| 12 | Լոգատաշտակ | կոմպ | 4 | 40406 | 161624 |
| 13 | Ջրամատակարարման ներքին համակարգի փորձարկում, լվացում և ախտահանում | գծմ | 110 | 70 | 7700 |
| | Ընդամենը | | | | **750904** |
| | Ջրահեռացում | | | | |
| 1 | D=100 պոլիպրոպիլենային լայնուկավոր խողովակների մոնտաժում | գծմ | 60 | 1828 | 109680 |
| 2 | D=50 պոլիպրոպիլենային լայնուկավոր խողովակների մոնտաժում | գծմ | 42 | 1444 | 60648 |
| 3 | D= 75մմ պլաստմասե պատյան խողովակների | գծմ | 12 | 1458 | 21096 |
| 4 | Այլումինե հոսակ D=100 | կոմպ | 4 | 3820 | 15280 |
| 5 | Կերամիկական զուգարանակոնք ջրի տարայով | կոմպ | 4 | 23115 | 92420 |
| 6 | Լայնուկավոր պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր D=100-50 | հատ | 64 | 1514 | 96896 |
| 7 | Ստուգիչ-մաքրիչ D=100 | հատ | 4 | 1735 | 6940 |
| ա | Ջրահեռացման ներքին համակարգի փորձարկում, լվացում և ախտահանում | գծմ | 102 | 70 | 7140 |
| | Ընդամենը | | | | **410140** |
| | Էլեկտրամատակարարում | | | | |
| 1 | Լուսավորության վահանակ 160 Ա եռաֆազ ավտոմատ | կոմպ | 1 | 75320 | 75320 |
| 2 | Ավտոմատ անջատիչների տեղադրում մեկ տեղանոց 50 Ա | կոմպ | 4 | 1141 | 4564 |
| 3 | ППВ 2x4.0մմ² հատվածքի հաղորդալարի մոնտաժում | գծմ | 130 | 652 | 84760 |
| 4 | ППВ 2x2.5մմ² հատվածքի հաղորդալարի մոնտաժում | գծմ | 250 | 477 | 119250 |
| 5 | Г1ПВ 2xl.5մմ՝ հատվածքի հաղորդալարի մոնտաժում | գծմ | 230 | 454 | 104420 |
| 6 | Ճյուղավորիչ տուփ | հատ | 16 | 151 | 2416 |
| 7 | Միաբևեռ անջատիչ 6Ա | հատ | 12 | 1141 | 13692 |
| 8 | Երկբևեռ անջատիչ 6Ա | հատ | 16 | 1374 | 21984 |
| 9 | Խրոցակային վարդակ՝ հողակցման հպակով | հատ | 44 | 1071 | 47124 |
| 10 | Տուփ վարդակների և անջատիչների տեղադրման համար | հատ | 72 | 93 | 6696 |
| 11 | Պատի ջահ 1x60Վտ հզորությամբ | հատ | 4 | 4297 | 17188 |
| 12 | Առաստաղային լուսատու ԼԵԴ լամպով 1X100վտ հզորությամբ | կոմպ | 8 | 7814 | 62512 |
| 13 | Առաստաղային լուսատու ԼԵԴ լամպով 6x100վտ հզորությամբ | կոմպ | 4 | 15197 | 60788 |
| 14 | Առաստաղային լուսատու ԼԵԴ լամպերով 3x100վտ հզորությամբ | կոմպ | 12 | 12530 | 150360 |
| 15 | Առաստաղային առանցքային օդամուղ Q=15մ³/ժ, Ս=0.15կվտ | կոմպ | 8 | 15348 | 122784 |
| | Ընդամենը | | | | **893858** |
| | Ներտարածքային ենթակառուցվածքներ | | | | |
| | Ջրամատակարարում և ջրահեռացում | | | | |
| 1 | Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով | մ³ | 53 | 594 | 31482 |
| 2 | Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում, կողալիցքով | մ³ | 150 | 769 | 115350 |
| 3 | Ավազի նախապատրաստական շերտի իրականացում | մ³ | 26,7 | 4786 | 127786 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | h= 10սմ հաստությամբ | | | | |
| 4 | Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից՝ տոփանումով | մ$^3$ | 175 | 303 | 53025 |
| 5 | Ավելորդ գրունտի փռում տեղում | մ$^3$ | 26,7 | 82 | 2189 |
| 6 | D= 150,SN4 մակնիշի ծալքավոր լայնուկավոր պոլիէթիլեն խողովակների մոնտաժում խրամուղիներում | մ | 75,5 | 5101 | 385126 |
| 7 | D= 100,SN4 մակեիշի ծալքավոր լայնուկավոր պոլիէթիլեն խողովակների մոնտաժում խրամուղիներում | մ | 10 | 4379 | 43790 |
| 8 | D= I50 լայնուկավոր պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում խրսւմուղիներում | մ | 12,7 | 3924 | 49835 |
| 9 | D= 63, PN=1.0 ՄՊա պոլիէթիլեն խողովակների մոնտաժում խրսւմուղիներում | մ | 230 | 1397 | 321310 |
| 10 | D= 40, PN=1 .0ՄՊա պոլիէթիլեն խողովակների մոնտաժում խրսւմուղիներում | մ | 120 | 734 | 88080 |
| 11 | D= 63, PN=1 .0 ՄՊա պոլիէթիլեն խողովակների ձևավոր մասեր | հատ | 5 | 3144 | 15720 |
| 12 | D= 40, PN=1 .0 ՄՊա պոլիէթիլեն խողովակների ձևավոր մասեր | հատ | 10 | 2713 | 27130 |
| 13 | D= I50,SN4, D= I00,SN4, մակնիշի ծալքավոր լայնուկավոր պոլիէթիլեն խողովակների և D= I50 պոլիպրոպիլեն խողովակների փորձարկում սեղմված օդով և ջրով | կմ | 0,098 | 123 | 58812112 |
| 14 | D= 63,SN4, D= 40,SN4, մակնիշի ծալքավոր լայնուկավոր պոլիէթիլեն խողովակների ախտահանում | կմ | 0,35 | 74551 | 26093 |
| 15 | Նախապատրաստական շերտ B 7,5 դասի բետոնով | մ$^3$ | 1,36 | 41188 | 56016 |
| 16 | D=1,0մ տրամագծով ե/բ հորի հիմքի սալ Հ.Ս-10 տիպի | հատ | 4 | 18620 | 74480 |
| 17 | B 12,5 դասի բետոնե վաքի պատրաստում երկաթայնացումով | մ$^3$ | 1,6 | 36530 | 58448 |
| 18 | Պատի օղակ ՊՕ-10-6 | հատ | 4 | 15767 | 6306 |
| 19 | Ծածկի սալ ԾՍ-1-10 | հատ | 4 | 16024 | 64096 |
| 20 | Թուջե ծանր մտոց կափարիչով "T" տիպի (400կգ) | հատ | 4 | 65468 | 261872 |
| 21 | Ներդիր տարրեր | կգ | 72 | 687 | 49464 |
| | Ընդամենը | | | | **1926472** |
| | Էլեկտրամատակարարում | | | | |
| 1 | Փորրակի մշակում 111 կարգի գրունտներում , կողալիցքով | մ$^3$ | 1,6 | 594 | 950 |
| 2 | Փորրակի մշակում IV կարգի գրունտներում , կողալիցքով | մ$^3$ | 6 | 769 | 4614 |
| 3 | Խամքարաբետոնե հիմքերի իրականացում B 7,5 դասի բետոնով | մ$^3$ | 7,5 | 33503 | 251273 |
| 4 | Ավելորդ գրունտի փռում տեղում | մ$^3$ | 7,5 | 1258 | 9435 |
| 5 | Փայտե հենարանների տեղարում Մ=10.0մ | հատ | 3 | 74214 | 222642 |
| 6 | Փայտե անկյունախարսխային հենարանների տեղադրում H=9.0մ | հատ | 1 | 127094 | 127094 |
| 7 | Ցցամեկուսիչ ՑՄ 10-Գ | հատ | 10 | 2818 | 28180 |
| 8 | Այումինե հաղորդալար 4x50մմ² | մ | 105 | 116 | 12180 |
| 9 | AC-50 հաղորդալարի արժեքը | մ | 105 | 2084 | 218820 |
| 10 | Ավտոմատ անջատիչների մետաղական արկղ 0.6x0.4x0.2մ | հատ | 1 | 49282 | 49282 |
| 11 | Սեղմակ Ա2 Ա-50 | հատ | 1 | 35086 | 35086 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 12 | Եռաֆազ ավտոմատ անջատիչ 50Ա | հատ | 1 | 3226 | 3226 |
| 13 | Անկյունապողպատ 50x50x5մմ. L=2,5մ | հատ | 9 | 7290 | 65610 |
| 14 | Շերտապողպատ, 40x4մմ | մ | 40 | 780 | 31200 |
| | Ընդամենը | | | | **1059592** |
| | Ջրահեռացման կուտակման հոր (սեպտիկ) և բակային զուգարաններ | | | | |
| 1 | Փոսորակի մշակում III կարգի գրունտներում , կռղալիցքով | մ³ | 41 | 594 | 24354 |
| 2 | Փոսորակի մշակում IV կարգի գրունտներում , կռղալիցքով | մ³ | 102 | 769 | 78438 |
| 3 | Փոսորակի ետլիցք, կռղալիցքի մշակված գրունտներից' տոփանումով | մ³ | 61 | 303 | 18483 |
| 4 | Ավելորդ գրունտի փռում տեղում | մ³ | 82 | 82 | 6724 |
| 5 | Նախապատրաստական շերտ B 7,5 դասի բետոնով | մ³ | 2,5 | 41188 | 102970 |
| 6 | Միաձույլ ե/բ B 20 դասի բետոնով | մ³ | 29 | 47512 | 1377848 |
| 7 | Ամրան A1 c դասի | տն | 0,172 | 509912 | 86685 |
| 8 | Ամրան A500 c դասի | տն | 1,92 | 495695 | 951391 |
| 9 | Պատյան խողովակ D= 300-200մմ | տն | 0,022 | 1857051 | 40855 |
| 10 | Ամրան A500 c դասի | տն | 0,003 | 495716 | 1487 |
| 11 | Փայտե ծածկոց | մ² | 0,8 | 7476 | 5981 |
| 12 | Թուջե ծանր մտոց կափարիչով "T" տիպի (100կգ) | հատ | 2 | 65468 | 130936 |
| 13 | Պատերի իրականացում կանոնավոր ձևի տուֆ քարով կարանների գծանշմամբ | մ³ | 6,3 | 23139 | 145776 |
| 14" | Ամրան AI c դասի | տն | 0,07 | 509912 | 35694 |
| 15 | Միաձույլ ե/բ սյուն B 15 դասի բետոնով | մ³ | 0,7 | 71302 | 49911 |
| 16 | Ամրան AI c դասի | տն | 0,07 | 509912 | 35694 |
| 17 | Ամրան A 500c դասի | տն | 0,14 | 495716 | 69400 |
| 18 | Միաձույլ ե/բ պարապետ B 15 դասի բետոնով | մ³ | 1,1 | 63337 | 69671 |
| 19 | Ամրան AI c դասի | տն | 0,022 | 509912 | 10198 |
| 20 | Ամրան A 500 c դասի | տն | 0,091 | 495716 | 45110 |
| 21 | Ե/բ հատակի B 15 դասի բետոնով | մ³ | 1 | 62708 | 62708 |
| 22 | Ամրան AI c դասի | տն | 0,034 | 509912 | 17337 |
| 23 | Ցեմենտավազե հարթեցնող շերտ h=30մմ հաստությամբ | մ² | 12 | 1397 | 16764 |
| 24 | Աստիճանավանդակների հիմքերի իրականացում B 7,5 դասի խամքարաբետոնով | մ³ | 0,5 | 33503 | 16752 |
| 25 | Ե/բ աստիճանավանդակ B 15 դասի բետոնով | մ³ | 0,72 | 62708 | 43891 |
| 26 | Ամրան AI c դասի | տն | 0,032 | 509912 | 16317 |
| 27 | Մետաղապլաստե սպիտակ գույնի արտասահմանյան պրոֆիլներով 60 մմ հաստությամբ ներքին բացվող դռների տեղադրում | մ² | 8,7 | 35517 | 308998 |
| 28 | Տանիքածածկույթի պատրաստում ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից 0.55մմ հաստությամբ ներառյալ փայտե կավարամածը | մ² | 15 | 5729 | 85935 |
| 29 | Փայտե կոնստրուկցիաների տեղադրում | մ³ | 0,6 | 230152 | 138091 |
| 30 | Փայտե կրող կոնստրուկցիաների,կավարամածի և տախտակամածի հակահրդեհային և հականեխիչ պաշտպանություն | մ³ | 1 | 12740 | 12740 |
| 31 | Պատերի և առաստաղների ներքին մակերեսի ց/ավազային սվաղ | մ² | 67 | 2061 | 138087 |
| 32 | Առաստաղի լատեքսային ներկում մածիկապատումով | մ² | 12 | 1677 | 20124 |
| 33 | Պատերի լատեքսային ներկում մածիկապատումով | մ² | 55 | 1549 | 85195 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 4250545 |
| ԸՆԴԱՆՈՒՐԸ | | | | 46411985 |
| Շահույթ ( 11 %) | | | | 5105318 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 51517303 |
| Չնախատեսված ծախսեր (3%) | | | | 1545519 |
| Ընդամենը՝ | | | | 53062822 |
| Ա.Ա.Հ. (20%) | | | | 10612564 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 63675389 |

* Կապալառուն աշխատանքները կատարում է 'Հարավ-Արևելյան սահման' հասցեում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ԱԱԾ**
**ք.Երևան, Նալբանդյան104**

**ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/հ 900011301067**
**ՀՎՀՀ 01507079**
**Տնօրենի տեղակալ**
**Ա. Հակոբյան**

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**Գործընկեր 1**
Հայրենի Տուն ՍՊԸ
**Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Խանջյան փ., 2-րդ նրբ. 4-րդ շենք**
**ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ**

**Հ/հ 163158036232**
**ՀՎՀՀ 03024201**
**Տնօրեն**
**Ս. Վարդանյան**

**Գործընկեր 2**
ԱՐՍԳՈՇԻՆ ՍՊԸ
**Կոտայքի մարզ, գ. Ալափարս 19փ., տ.36**
**ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ**

**Հ/հ 220433330143000**
**ՀՎՀՀ 02809833**
**Տնօրեն**
**Գ. Հակոբյան**

*Հավելված թիվ 2*
*« 25 » 12 2019թ. կնքված*
*N111348-2019 ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
ՉԱՓԱԲԱԺԻՆ 1
**<<ՀՀ ԱԱԾ ՍՁ 5070 զ/մ 13-րդ ՍՈՒ-ի սպայական բնակարանների կառուցման>>**
**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Հողային աշխատանքներ | ***ֆինանսական միջոցներ նախափեռվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը*** | **Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից՝ 335 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:** |
| 2 | Հիմնային աշխատանքներ | | |
| 3 | Ե/բետ աշխատանքներ | | |
| 4 | Պատշարային աշխատանքներ | | |
| 5 | Մոնտաժային աշխատանքներ | | |
| 6 | Տանիքային աշխատանքներ | | |
| 7 | Էլ. մոնտաժային աշխատանքներ | | |
| 8 | Ներքին հարդարման աշխատանքներ | | |
| 9 | Սանտեխնիկական աշխատանքներ | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ԱԱԾ**
**ք.Երևան, Նալբանդյան104**

**ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/h 900011301067**
**ՀՎՀՀ 01507079**
**Տնօրենի տեղակալ**
**Ա. Հակոբյան**

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**Գործընկեր 1**
Հայրենի Տուն ՍՊԸ
**Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Խանջյան փ., 2-րդ նրբ. 4-րդ շենք**
**ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ**

**Հ/h 163158036232**
**ՀՎՀՀ 03024201**
**Տնօրեն**
**Ս. Վարդանյան**

**Գործընկեր 2**
ԱՐՍԳՈՇԻՆ ՍՊԸ
**Կոտայքի մարզ, գ. Ալափարս 19փ., տ.36**
**ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ**

**Հ/h 220433330143000**
**ՀՎՀՀ 02809833**
**Տնօրեն**
**Գ. Հակոբյան**

*Հավելված N 3*
*«        » 20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45211193/501 | աշխատանքային տարածքների կառուցման աշխատանքներ | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % | % |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ԱԱԾ**
**ք.Երևան, Նալբանդյան104**

**ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/հ 900011301067**
**ՀՎՀՀ 01507079**
**Տնօրենի տեղակալ**
**Ա. Հակոբյան**

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**Գործընկեր 1**
Հայրենի Տուն ՍՊԸ
**Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Խանջյան փ., 2-րդ նրբ. 4-րդ շենք**
**ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ**

**Հ/հ 163158036232**
**ՀՎՀՀ 03024201**
**Տնօրեն**
**Ս. Վարդանյան**

**Գործընկեր 2**
ԱՐՍԳՈՇԻՆ ՍՊԸ
**Կոտայքի մարզ, գ. Ալափարս 19փ., տ.36**
**ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ**

**Հ/հ 220433330143000**
**ՀՎՀՀ 02809833**
**Տնօրեն**
**Գ. Հակոբյան**

*Հավելված թիվ 4*
*«      »          20   թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| հվհհ ____________________ | հվհհ ____________________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«    » «          » 20    թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «                » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*« » 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ____________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________<br>ազգանուն, անուն | ______________________<br>ազգանուն, անուն |
| ______________________<br>ստորագրություն | ______________________<br>ստորագրություն |